

Յարգարժան Տիկին Յակոբեան,

Սրտանց կը շնորհաւորեմ Սփիւռքի նախարարութեան երկամեայ յոբելեանը:

Այս շատ կարճ ժամանակամիջոցին, դուք եւ ձեր ժրաջան աշխատակազմը կարողացաք բազմաթիւ ծրագիրներ իրագործել, որոնցմէ կ'ուզեմ առանձնացնել »Արի տուն« ծրագիրը, որ անմիջականօրէն կը կապէ սփիւռքի մեր երիտասարդները իրենց մայր հայրենիքին հետ: Դուք նաեւ յաջողեցաք նոր օրէնքներ առաջադրել Ազգային ժողովին, դիւրացնելու համար սփիւռքահայերու Յայաստան այցելութիւնն ու կեցութիւնը:

Սփիւռքի նախարարութիւնը նաեւ դարձաւ շատ կարեւոր կամուրջ մը սփիւռքի եւ հայրենիքի միջեւ: Սփիւռքահայը հիմա գիտէ, թէ Յայաստանի մէջ կեդրոն մը կայ ուր կրնայ իր բոլոր հարցերը ներկայացնել եւ լուծումներ կամ օգտակար առաջարկներ ստանալ իր բազմազան դժուարութիւններուն վերաբերեալ:

Դուք նաեւ կատարեցիք բազմաթիւ այցելութիւններ սփիւռքի զանազան համայնքներուն, աւելի մօտէն ծանօթանալու համար տեղական իւրայատուկ պայմաններուն եւ պահանջներուն:

Որպէս մէկ անդամը Սփիւռքի նախարարութեան ատեանին, երախտապարտ կը զգամ, որ առիթը կուտաք ինձի եւ ատեանի միւս անդամներուն կարծիքները լսելու՝ նախքան որոշումներ առնելը եւ գործադրելը:

Որքան սփիւռքը եւ հայրենիքը իրար լաւ ճանչնան, այդքան աւելի լաւ կրնան համագործակցիլ եւ միասնաբար առաջ տանիլ ազգային շահերը:

Տակաւին շատ ճամբայ ունինք կտրելիք եւ շատ հարցեր ունինք լուծելիք, բայց ձեռք-ձեռքի տալով, կրնանք հարթել մեր բոլոր դժուարութիւնները ի շահ մեր հայրենի եւ աշխարհասփիւռ ժողովուրդին:

Յարգանք՝

Յարութ Սասունեան

Նախագահ Միացեալ Հայկական Ֆոնտի

Փոխ-նախագահ Լինսի Հիմնարկի

Հրատարակիչ California Courier թերթի

Անդամ Սփիւռքի նախարարութեան ատեանի